

Հանդէսը լաւ ուղաւորութիւն գործեց հանդիսականների վերայ. բայց չմոռանանք նկատել, որ հանդիսին մասնակցեց Դպրոցի նախկին սաներից շատ չնչին մասը.—զարմանալի ապերալսութիւն,

## Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

Տարւոյս փետրուարի 26-ին ս. Էջմիածնում Մայր Աթոռի հոգեոր Ճեմարանի ուսուցչական խումբը ընտանեկան կերպով տօնեց հայոց մանկավարժութեան պատ Սեղբաք Մանդինեանցի գործունէութեան քսան և հինգամեակը. այդ տօնը միևնույն ժամանակ և մի հրաժեշտի տօն էր, որովհետև ոլ. Մանդինեանը հեռանալով մանկավարժական ասպարէզից՝ գնում էր արտասահման խանդարուած առողջութիւնը փերականգնելու նպատակով:

Պ. Մանդինեանը գործել է մեր մէջ որպէս մանկավարժ երկար տարիներ վարելով տեսչութեան և ուսուցչական պաշտօններ Ներսիսեան հոգեոր Դպրոցում և ուսուցչութիւն ս. Էջմիածնի հոգեոր Ճեմարանում, որպէս հեղինակ բազմաթիւ դասադրքերի հայ ուսուցիչների և ուսումնարանների համար, և վերջապէս որպէս աշխատակից հայ թերթերին. նորա մանկավարժական ընտիր յօդուածները տպուել են «Փորձ», «Վարժարան», «Արարատ» ամսագիրների և «Հումայ» հանդիսի մէջ և շատերն էլ առանձին գրքոյկներով:

Յօրելեանի հանդիմական կարդացուել է Ազգիս Վեհ. Հայրապետի սրբատառ կոնդակը, որով օրհնում է նորա բեղմնաւոր գործունէութիւնը և խոստանումէ ապագային չմոռանալ նորան:—Ներսիսեան հոգեոր Դպրոցի հոգաբարձութիւնը շնորհաւորելով 25-ամեակը՝ նուիրեց 600 ռուբլի, այսպէս էլ բազմաթիւ շնորհաւորականներ էին ստացուած ճեմարանի և բոլոր հոգեոր Դպրոցների ուսուցչական խմբերից, հայ թերթերի խըմբագրութիւններից և նորա բազմաթիւ աշակերտներից ու մասնաւոր անձերի կողմից:

«Հումայ»-ի խմբագրութիւնը ևս իւր կողմից ս. Էջմիածին հետեւալ հեռագիրը ուղղեց. «Եմբագրութիւնս բաղտ ունի շնորհաւորել տաղանդաւոր մանկավարժիդ 25-ամեայ արդիւնաւոր գործունէութիւնը»:

Պ. Մանդինեանի տուած օգուտը նոր սերնդի կրթութեան գործին այնքան մեծ է՝ որ մենք միայն ցաւել կարող ենք հայ հասարակութեան ցոյց տուած անտարբերութեան վերայ:

### † ՅԱԿՈՎՔ ՃԱՂԱՐԲԵԴԻԵԱՆՑ

Հայ ազգի մատաղ սերնդի դաստիարակութեան նույի րուած անհատներից առաջին գոհը չէ հանդ. Յակովք Ճաղարբէգեանցը և ոչ էլ վերջինը կը լինի. այս վշտու ասպարէզը շատ ծաղիկ կեանք է մարել և դեռ կը շարունակէ մարել նա նոյն դառն և յուսահատ դրութեամբ, նոյն դժբախտ և ցաւալի պարագաներում. Ո՞րքան ովկորութեամբ աղնիւ երիտասարդներ մտել են հայի կեանքի լուսան անդաստանը մշակելու, բայց և ինչպէս ուժասպառ, լքեալ, յուսահատ թողել հեռացել են, կամ թէ շարունակել են հիմուած, նուաղած այդ վեհ և բարձր կոչման ծառայել, նուիրուել մի գործի. որ պահանջում է անկեղծ ու աղնիւ մշակներ: Ո՞րքան կոկոններ են դեռ չը բացուած թառամել... որքան լեզուներ է արմատից կարել մեր հասարակութեան խորին անտարբերութեան սառնամանիքը:

1900 թ. Յունուար 1-ին բոլորից մոռացուած, յուսահատ գրութեան մէջ, հեռու իրեն յարգողներից իւր մանկանացու չարատանջ կեանքը կնքեց զրական ասպարիզի համեստ մշակներից մէկը՝ Յակովք Ճաղարբէզեանց:

Հանգուցեալը ծնուել է Շուշի քաղաքում 1864 թուին. իւր սկզբնական կրթութիւնը ստացել է Նախ մասնաւոր մարդու մօտ, ապա մտել է թեմական դպրոցը, որ այդ ժամանակ միայն չորս դասարան ունէր և միակ բարեկարգ վարժարանն էր. Ճաղարբէգեանը եօթը տարի մնաց այս դպրոցում և հանդիսացաւ իրու ամենաընդունակ ու յառաջադէմ աշակերտներից մէկը. Նա չափից գուրս աշխատասէր տղայ էր և այդ աշխատասիրութիւնը եղաւ նրա ապագայ գործունէութեան հիմքը: Դպրոցից նա գիտութեան մի մեծ պաշար էլ չը տարաւ իւր հետ, որովհետև միմիայն չոր ու ցամաք առարկաներն էին սովորեցնում. 1881 թուականին նա աւարտեց թեմ. դպրոցը. իսկ այդ միջոցում գեռ ևս Ղարաբաղի թեմում գրեթէ չը կային. ծխական դպրոցներ. ճիշտ է, մի երկուաը գոյութիւն ունէին, բայց խիստ ողորմելի վիճակի մէջ. մինչդեռ Շամախու թեմում կային դպրոցներ, բայց նոքա էլ չունէին յարմար դասատուներ թեմական դպրոց չունենալու պատճառով. այնպէս որ նուշուց շատ երիտասարդներ աւարակուն պէս դիմում էին Շամախու թեմը: